

5610

W. H. H. H.

782

---

0-57

505

Հ ԳԵՏԱԿԱՆ ՈՂԵՐԱ

# Ա Ն Ո Ւ Շ

ՈՂԵՐԱ 5 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ ՅԵՎ 7 ՊԱՏԿԵՐՈՎ

ՅԵՐԱԾՇԱՆՈՒՄՆԻ ԱՐԹՆԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ  
ԸՆՏ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

ՅԵՐԱԾՇԱՆՈՒՄՆԻ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՆԻՍՏԱԿԱՆ ԳՐԱԳՐԱՆՅԱՆԻ  
ՈՒՐԹՆԵՆ ԹԵՐԵՎԱՆ ԹԵՐԵՎԱՆ

782  
0-57

Հ ԳԵՏԱԿԱՆ ՈՂԵՐԱ  
ԸՆՏ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ  
ԹԵՐԵՎԱՆ ԹԵՐԵՎԱՆ

ԹԵՐԵՎԱՆ 1935



10 2 .09. 2013

5610

782  
0-57

Քննարկության վատակալոր անձից՝ ԱՐՄՆԷ ԳՈՒՎԱԿՅԱՆԵ  
Գիրիձյոյ՝ ՍԵՐԳՅՅ ՇԱԹԻՐՅԱՆ  
Արտաին ձեկավորում՝ ՄԻԲԱՅԵԼ ԱՐՈՒՏՏՅԱՆԻ  
Բալետայտեր՝ ՎԱՀՐԱՄ ԱՐԻՍԱԿԵՍՅԱՆ  
Խառայտեր՝ ՆԻԿՈՒՍԿԻ  
Քնձիցյոյի աղտտեմա՝ ՇԱՐԱ ՏԱԼՅԱՆ



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

1008 3976  
54843  
8001

9267





202/1 P



ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ





## ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

(Կենսագրական գծեր)

Կոմպոզիտոր ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆԸ ծնվել է 1880 թվին, Ալեքսանդրապոլ քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի քաղաքային դպրոցում և ապա Թիֆլիսի յերկրորդ դիմնադիւսում: Յերաժշտություն սովորել է Թիֆլիսի կայսերական յերաժշտական դպրոցում (1897-1900) և ապա կոմպոզիտոր ԿԼԵՆՈՎՍԿՈՒ մոտ:

«Մանկական միջավայրս— դրում է իր ինքնակենսագրության մեջ Արմեն Տիգրանյանը— կուլտուրական յերաժշտությունից կտրված եր. բացի աշուղներից, յեկեղեցական մերդիւաներից և մասամբ զինուորական նվագախմբերից ուրիշ յերաժշտական աշխարհ չկար: Մակայն մայրս, վոր ոժտված եր բանաստեղծական յառնելածքով, իր յերգերով ու արտասանություններով յտրացրեց իմ մեջ արամազրություններ, վորոնք անչեղ տանում էյին ինձ դեպի յերաժշտական հորիզոնները»<sup>\*)</sup>:

<sup>\*)</sup> Այս ինքնակենսագրությունը հարգելի կոմպոզիտորը գրել է իմ ինքրանոց. ձեռագիրը դանվում է իմ արխիվում:



1902 թվից սկսվում է Արմեն Տիգրանյանի յնրա-  
ժըշտական գործունեությունը: Անդրանիկ համերգը  
տեղի յե ունենում նույն թվին— Ալեքսանդրապոլում:  
Ծրագիրը կազմված է լինում ժողովրդական և ինք-  
նուրույն յերգերից: Այնուհետև նա բաղմամբով հա-  
մերգներ է կազմակերպում՝ Բագվում, Կարսում և  
Թիֆլիսում: 1905 թվից Տիգրանյանը պաշտոնաթա-  
րում է նախ Ալեքսանդրոպոլի Արդության և առևտրա-  
կան դպրոցներում, Կարսի յերկեսն դպրոցում և ապա  
Թիֆլիսի Հովնանյան դպրոցում: Դպրոցական բնա-  
գավառում նա աշխատել է ընդամենը 22 տարի:

«Հայկական ոպերայի միտքը— դրում է Արմեն  
Տիգրանյանը— ինձ սկսեց զբաղեցնել հենց այն ըոպե-  
լից, յերբ առաջին անգամ սկսեցի հաճախել Թիֆլիսի  
ոպերային ներկայացումները»:

1908 թվին առաջին անգամ ծանոթանալով ՀՈՎ-  
ՀԱՆՆԵՍ ԹՈՒՄՆՅԱՆԻ «ԱՆՈՒՇ» պոեմի հետ, Ար-  
մեն Տիգրանյանը վորոշում է այն վերածել ոպերայի:

1908 թվին Թիֆլիսում կայանում է «Աղբյուր  
Տարազ» մանկական ամսագրի 25-ամյակը. այդ առ-  
թիվ բեմադրվում է «ԱՆՈՒՇ»-ի առաջին պատկերը  
(Չանդյուլումի տեսարանը):

Այնուհետև Տիգրանյանն սկսում է սխառմատի-  
կաբար աշխատել «ԱՆՈՒՇ»-ի վրա, միաժամանակ  
ինքը պատրաստելով յիրբետան:

«ԱՆՈՒՇ»-ն ամբողջութամբ առաջին անգամ բե-  
մադրվում է 1912 թվին Ալեքսանդրապոլում: Այնու-  
հետև բաղմամբով քաղաքներում և դյուղերում բեմա-  
դրվում է վերոհիշյալ ոպերան, վորն ամեն տեղ խո-  
շոր հաջողություն է պանում:

Բացի «ԱՆՈՒՇ»-ից, Արմեն Տիգրանյանը դրել է  
«Էլեյլի և Մաճնուն» յերաժշտական դրաման, յերգեր,  
ոտմաններ (խոսք՝ Ավ. Իսահակյանի, Հովհ. Հով-  
հաննիսյանի), յամբական յերգեր՝ ինչպես ժողովրդա-  
կան, այնպես էլ ինքնուրույն յեղանակներից:

Տիգրանյանը միաժամանակ հայերենի յե թարգ-  
մանել «ԿԱՄՄԵՆ» և «ՌԻԳՈՒՆՏՏՏՈ» ոպերաները:

Կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը ախտիվ կերպով  
մասնակցել է մեր յերաժշտական հասարակական  
կյանքին: Նա յեղել է Թիֆլիսի հայոց Յերաժշտական  
Ընկերության Վարչության անգամ (մինչև հեղափո-  
խությունը), Հայ Յերաժշտության Աշխատավորների  
Միության Վարչության, իսկ հետո Հայկական Յերա-  
ժըշտության Սեկտորի անգամ, իսկ վերջին տարիներ  
ըլ նույն այդ սեկտորի նախագահ: Նա դրել է մի  
շարք հոգվածներ՝ նվիրված մեր յերաժշտական կուլ-  
տուրայի յնդիներին:



# Ա Ն Ո Ւ Շ

ՈՊԵՐԱ ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ ՅԵՎ ՅՈԹ  
ՊԱՏԿԵՐՈՎ

Որկեսարովկայի կոմսուլտանտ Ս. ՇԱԹԻՐՅԱՆ

(Առաջին բեմադրությունը 1912 թ., Ալեքսանդրապոլում)

Մեր յերաժշտության պատմության մեջ կոմպոզիտոր ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆԸ հանրածանոթ է հասկապես իբրև «Անուշ» ոպերայի հեղինակ: Այս յերկը խոշոր ժողովրդականություն տպեց նրան:

Մինչև հիմա ել այն կարծիքը կա, թե «Անուշ»-ի յերաժշտությունը մի ամբողջություն է ժողովրդական յերգերի: Սակայն սա սխալ տեսակետ է. «Անուշ»-ի վողջ յերաժշտությունը, բացի յերկու յեղանակից, Արմեն Տիգրանյանի սեփական ստեղծագործությունն է, ուր հեղինակն աշխատել է պահպանել հայ ժողովրդական յերգի վողին և Ֆոլկլորը:

«Անուշ» ոպերան սկսվում է նախերգանքով, վորի մեջ հյուսված են Անուշի, Սարոյի և Մոսիի յեղանակները հիմնական կտորները (լայտ մոտիվ):

«Անուշ»-ում հանդես յեկող գործիքային յերաժշտությունը հազեցված չէ հարուստ հնչյուններով:

Այդ արվեստը խորության կնիք չունի. կոմպոզիտորը չի այրվել սիմֆոնիկ կուլտուրայի հետցում:

Հարգելի կոմպոզիտորն իր ստեղծագործական թափը հանդես է բերել վողալ արվեստում: Յերաժշտական բաղմաթիվ նախադասությունների մեջ նա թափել է վառ ու ջերմ գույներ: Այդ յերգերը լի յեն հուղականությամբ ու անմիջականությամբ:

Այս տեսակետից առանձնապես արժեքավոր նմուշներ պետք է համարել «Աղջի անասոված», «Բարձր սարեր», «Ասում են ուռին» և մի շարք այլ մեներգներն ու խմբերգները:

Արմեն Տիգրանյանն իբրև ստեղծագործող ղլխավորապես լիրիք է, թեև նրա այս յերկում կան դրամատիկ շեշտեր:

Իր պարզության հետ միասին «Անուշ» ոպերայի լիրիքական յեղանակները հարուստ են եմոցիաներով:

Մեր ինքնուրույն ոպերաների մեջ «Անուշ»-ն ունի իր արժեքավոր տեղը:

Արմեն Տիգրանյանի գործը նաև նրանով է նշանակալից, վոր նա հիմնադիրներից մեկն յեղավ մեր ինքնուրույն ոպերաների ստեղծմանը:



## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Անուշ. — Գյուղացի աղջիկ. (լիբիկ-կոլորատուր սոսլրանո)

Սարո. — Յերիտասարդ հովիվ, չքավոր, սիրահարված Անուշին. (լիբիկ-գրամատիկ տենոր).

Մոսի. — Անուշի յեղբայրը. յերիտասարդ հովիվ. ունենոր (գրամատիկ բարիտոն).

Անուշի մայրը. — 50 տարին անց (մեցցո սոսլրանո):

Քյոխվա. — 50 տարին անց. (բաս).

Զվարճախոս Ոհան. — 40 տարեկան, չքավոր դյուղացի (բարիտոն).

Պահապան ծերունի. — (բաս).

Անցվոր. —

Քաղմաթիվ գեղջկուհիներ և գյուղացիներ:

## ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

(Առաջին պատկեր)

Ուզեա՛ն սկսվում է նախերգանքով: Խումբը յերգում է փերիների յերգը, վորի տակ կատարվում է փերիների պարը:

Յեկե՛ք, բույրե՛ր, սեգ սարերի,  
Զֆնադագեղ վոգիներ,  
Յեկե՛ք, ջանել սիրահարի,  
Սերը վողբանք վաղամեռ:

Վուշ-վո՛ւշ, Անու՛շ, վուշ-վո՛ւշ, բուրի՛կ,  
Վո՛ւշ բու սերին, բու յարին...  
Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ իգիք,  
Վո՛ւշ բու սիրած սարերին...

Առավոտ է: Սիրահարված Սարոն յեններում իր սերն է յերգում:

Աղջի՛, անասոված, նստի՛ր վրանում,  
Ի՞նչ ես դուրս գալիս, ինչֆամաղ անում,  
Աշուղ ես շինել, չեմ հանգրատանում,  
Խաղեր կապելով,  
Զուր չափելով,  
Վաչխարբս անտեր,  
Ընկել եմ հանդեր:



Անուշը լսելով Մարոյի յերգը, դիմում է մորը  
հետեյալ խոսքերով.

Են ո՞վ եր, նանի', վոր կանչում եր մեզ,  
Դու չե՞ս իմանում... ականջ արա, տե՛ս...

Մայրը հանդիմանելով դիմում է աղջկան.

Հերի՛՛ք է, Անու՛շ, ներս արի դագեն,  
Քանի՛ դուրս քրոջես, նայես դես ու դեմ.  
Տեսնողն ել կասի— ի՞նչ աղջիկ ե սա...  
Հագար մարդի մոտ կերքա կըլսոսա:

Յեւ լեռների լանջերում նորից հնչում է հովիտի  
Մարոյի թախծոտ յերգը.

Ամա՛ն, երեցիր սիրտըս քու սիրով,  
Վտըս կապեցիր քեյ-քեյ մագերով,  
Ել չեմ դիմանա, կը փախցնեմ գոռով,  
Ա՛յ սարի աղջիկ,  
Ա՛յ սիրուն աղջիկ,  
Ա՛յ դու կարմրաքուշ,  
Թուխամագ Անուշ:

Մարոյի յերգի քաղցր հնչյունները Անուշին հանձ-  
նում են խորը մտորումների: Նա յերգում է.

Ա՛յս, սիրտըս, նանի՛, չը գիտեմ ինչու,  
Մի՛ն լաց ե լինում սևակնած, տըխ՛ւր,  
Մի՛ն քեւ ե առնում, ուզում ե քրոջի,  
Զըգիտեմ՝ քե ո՛ւր, չըգիտեմ՝ քե ուր...

Նա՛նի ջան, նա՛նի, յես ի՞նչպես անեմ,  
Ի՞նչ անի անճում, անհանգիստ քայեդ,

Նա՛նի ջան, նա՛նի, կուժը քոդ առնեմ  
Աղբյուրը գընամ աղջիկների հետ...

Հեռվից լսվում է ջուրը դնացող աղջիկների յեր-  
գի ձայնը: Անուշը վերցնում է ջրի կուժը և վազում  
ձայների ուղղությամբ:

ՅԵՐԿՐՈՐԳ ՊԱՏԿԵՐ

Լեռնային բնություն: Աղջիկները կժերն ուսե-  
րին իջնում են ձորը յերգելով.

Ամպի տակից ջուր ե գալի,  
Դռշ ե տալի փըրփըրում.  
Են ո՞ւմ յարն ե, նըստած լալի  
Հոնգուր-հոնգուր եմ սարում:

Այնուհետև աղջիկներն սկսում են սրտամեկ իրենց  
ցավերը, մանիներ են ասում, վորի ժամանակ մի  
սրտմխտ աղջիկ ամեն մեկին պատասխանում է քաղ-  
յակով:

Հեռվից լսվում է Անուշի մոր կանչը.

— Աղջի, հեյ, Անուշ, Անուշ, տուն արի:

Անուշը վեր ե թռչում. խումբը կամաց-կամաց  
հեռանալով յերգում է.

Ա՛յ, պաղ ջըրեր, գուլալ ջըրեր,  
Վոր գալիս եք սարերից,  
Գալիս՝ անցնում հանդ ու չոլեր,  
Յարս ել խըմե՞ց եդ ջըրից:



Աղջիկներէ խումբը հեռանում է. Անուշը հետ է  
ընկնում ու յերգում

Ախ, իմ բախտը կանչում է ինձ,  
Ձեռն հասկանում դեպի ուր,  
Դողում է պաղ նրա ձայնից  
Իմ սիրտը սե ու սխուր:

Անուշը թախծոտ ու մոռյլ շարունակում է յերգել:

Ասում են՝ ուռին  
Աղջիկ եր ինձ պես,  
Մընում եր յարին,  
Ու չեկալ նա տես:

Նորից լսվում է Սարոյի յերգը: Իրիկնաժամին  
Անուշը և Սարոն հանգիպում են իրարու:

Յե՛մ յերկու սիրոյ հողիներն սկսում են լեռնելում  
յերգել:

Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես,  
Հենց յես եմ մեկնալ լալիս ու տանջվում:  
Դու աարի լանջին իտաղեր ես կանչում:

Անուշի խոսքերը զիւլչում են հովիվ Սարոյի  
քնքուշ սրտին. նա պատասխանում է.

Ա՛խ, Անա՛ւշ, Անա՛ւշ, եղ ի՞նչ ես ասում.  
Բա դու չե՞ս լըսում.  
Են, վար լանջերին իտաղեր եմ ասում,  
Ո՞ւմ հետ եմ խոսում...  
Են, վար գիշերով շքեռ յեմ փչում,  
Են ո՞ւմ եմ կանչում...

Անուշի մայրը վրանից զուրս զարով աղջկանն է  
փնտրում:

Աղջի՛, սեասի՛րա, քու սեր կրտրի,  
Աղջիկը մեկնալ ձո՞րք կրմտնի.  
Ամպերն յեկել են, աշխարհք մըթնել,  
Աղջի, հե՛յ Անուշ, ա՛յ աղջի՛ Անուշ...

976  
3976  
1008  
34853





ՅԵՐԿՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

(Առաջին պատկեր)

Աղջիկներն ու տղաները հավաքվել են ջանդու-  
լումի:

Աղջիկները յերգում են.

Համբարձումն յեկավ, ծագկունքը արվան,  
Ձուգեղ են հանդեր նախշուն գորգերով.  
Փունջ-վունջ աղջիկներ սայերը յեյան;  
Վիճակ հանելու աշխույժ յերգերով:

Համբարձում, յա՛յլա,  
Յայլա ջան, յա՛յլա,  
Լավ որեր, յա՛յլա,  
Յա՛յլա ջան, յա՛յլա:

Բոլորը միասին կիսաչքջան կազմած նստում են  
վիճակ հանելու: Մի փոքրիկ աղջիկ դևին քող  
դցած, մի փոքրիկ կճուճի մեջ ածում է մասնակ-  
ցողներին մի-մի իր և վիճակ ասելուց հետո, առանց  
ջոկելու մի իր հանում է:

Մի քանի վիճակ հանելուց հետո, աղջիկներին  
մեկը յերգում է.

Ա՛յ թուխ մազավոր աղջիկ,  
Ա՛յ սարի սովոր աղջիկ,

Ջիգյարին գյուլա դիպչի,  
Քեզ ով վոր սիրի աղջիկ:

Վիճակը դուրս է գալիս Անուշին. ընդհանուր  
չփոթ է տրում. բոլորը լուսթյամբ կանդնում են ու  
յերգում.

Վո՛հ, ի՛նչ սև վիճակ քեզ բաժին ընկավ,  
Սեվարա՛խտ փուրիկ, նագիլի Անուշ:

Ապա իրենց ընկերուհուն հեռույալ խոսքերով մխի-  
թարում են.

Սուտ բան է, փուրի՛կ, դու մի՛ հավատա,  
Լոկ պատահական մի չար խոսք է սա,  
Սիրտըդ մի՛ կոտրի սուտ բանի համար  
Քո խաղըդ խաղա՛, ջան գյուլում ասա:

Սակայն Անուշի սիրտը կոտրվել է. նա հավատում  
է իր վիճակին. նա վերհիշում է.

Ասում են՝ մի որ, յես որորցում,  
Մի պառավ դավրիշ մեր տուն է գալի,  
Իր խաղն է ասում ու բաժին ուզում,  
Իմ նանը նրան բաժին չի տալի:  
Կորի՛, ասում է, կորի՛ մեր դրոնից,  
Յերեխառ նաքեց, հեռացի՛ր, գրնա.  
Ու դավրիշն Բետեղ անիծում է ինձ,  
Թե՛ դրա որը լացով անց կենա:

Յերևում է Անուշի յեղբայրը: Նա կշտամբում է  
քոջը:

Անուշը կշտամբական հայացք ձդելով Մոսիի վրա,



սկսում է բարձրանալ դեպի լեռը: Մոսին այլ ճանապարհով հեռանում է:

Խմբի ձայները լռում են: Լսվում է Անուշի յերգը.

Դուք ել, սարի սիրուն ծաղկունք,

Թափուն մի ցավ ունեք լուռ,

Աչիկներդ լիքն է արցունք,

Սիրտներդ սև ու սխուր.

### ՅԵՐՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

(Առաջին պատկեր)

Ունեվոր գյուղացու տուն: Հարսանիք է: Զմռան մի գիշեր: Քեֆ է: Գործողությունն սկսվում է խմբական պարով: Պարից հետո քյոխվան ստում է, վոր բոլորն իրենց տանը հյուրն են: Մինչ այդ բացահայտվում է Մարտի ու Մոսին ներս են մտնում:

Մարտն յերգում է: Մոսին պարում: Քյոխվան առջարկում է, վոր յերկու ջահել իլիթները կոխ բռնեն: Եւ յեր ստաջարկում են հանդիսականները.

Մեյդան բաց արե՛ք, վոր գյուղաջ բռնեք,

Սարս ու Մոսի, դե մեյդան յեկեք:

Խումբը բաժանվում է յերկու մասի: Ամեն մեկը դովում է իր իլիթին: Մեծամասնության համակրանքը Մարտի կողմն է:

Կավոզները սաքանում են: Անուշը դուրս է դալիս հարս ու աղջիկներին միջից. սրտակառուր և դուճասո նայում է կավոզներին: Մարտն նկատելով Անուշին, մտանում է գյուղի «աղաթը», դեանում է ընկերոջը և չոքում վրան: Մի քանի գյուղացիներ կավոզներին դեանից բարձրացնում են:

Մոսին դժգոհ է.

Թող գա՛, վոր բռնենեք նորից,

Թե չե նամարդը, արևս եմ յերդվում,

Ել չի պրծնելու յերբեք իմ ձեռից:



Սակայն դուրդացիներն ընդդիմանում են և թույլ  
չեն տալիս:

Պարերը շարունակվում են:

Յերկրորդ պատկեր

Անուշնոց բալը: Մոսին դժգուշն ու ցասկոտ,  
կանգ է առնում իրենց տան դռան մոտ:

Ամո՞ք դեզ, Մոսի, քո՛ւմ ու նախատի՞նք,  
Ամոք քեզ նման գոված իգիթի՞ն,  
Մի անունդ հիշիր, մի բոյլդ մտիկ,  
Դեռ քո քիկունքը չիք տեսիլ գետին:

Ներս է մտնում Անուշը և Մոսիի յերգի ժամա-  
նակ, անվստահ, կամաց և ծանր քայլերով սկսում է  
մոտենալ ու ձեռքը դնում է յերգոր ուսին: Մոսին  
թեքվելով դեպի Անուշը, հանում է դաշույնը: Անուշը  
վախեցած չոքում է.

Վա՛յ, վա՛յ, Մոսի ջան, ինձ մի՛ ըսպանիր,  
վախենում եմ յես... Ղամեդ տեղը դիր:

Անուշը յերգորը համոզում է, վոր Սարոյին ել չի  
տիրի, սակայն Մոսին չի հավատում:

Դու խարո՞ւմ ես ինձ, սուտի՛կ, խարերա...

Են ի՞նչ է հապա, վոր տեղն եմք մըտնում՝

Հեկեկում ես դու ու լալիս կամաց,

Են ի՞նչ է հապա, վոր դու յերագում

Սարո ջան, Սարո՛, Սարո ես առում:

Մոսին վրեժխնդրությամբ լցված՝ վճռական քայ-  
լերով հեռանում է:

Անուշը հեկեկալով սկսում է յերգել:

Որոր կասեմ քեզ իմ սեր,  
Վար դու քնես հավիտյան,  
Մոսին խլեց ինձանից,  
Քեզ բաժանեց հավիտյան:

Ձմրան լուսնիկա գիշեր է: Սարոն նկատելով Մո-  
սիի հեռանալը, զգուշությամբ մոտենում է Անուշին:  
Միասին սկսում են յերգել:

Սյուսեդ Սարոն ու Անուշը պայմանավորվում են,  
հենց վոր ձմեռն անցնի, ընչի հետ միասին փախչեն  
լեռները:

Բնի՛ր իմ սեր անթառամ,  
Բնի՛ր քնով հավիտյան,  
Համբարձում յայլա,  
Յայլա ջան, յայլա,  
Լավ որեր յայլա,  
Յայլա ջան, յայլա:

Գարուն կուգա,  
Հավիք կուգան,  
Ծիլ ու ծաղիկ կբացվի,  
Գառն ու վոչխար անուշ ձենով,  
Սարն են գնում մայելով:

ԱՆՈՒՇ.— Յես ու դուն ել իրար գրկած

ՄԻԱՍԻՆ.— Կանցնեմք Լոռու ձորերով,  
Հեյ ջա՛ն, հեյ ջա՛ն, մեկ քոզ անցնի ձմեռը:

ՍԱՐՈ.— Սիրած յարդ ինչ պիտ անի,  
Թե վոր չտա քո հերք,



Քեզ փախցնելը շատ հեշտ բան է,  
Մեկ քող անցնի՛ ճմեռք:  
Քարափնեքում տուն կը շինենք,  
Այրերի մեջ բուն կը դնենք:

ՄԻԱՍԻՆ.— Արեծեգին սարը յեղնեմք,  
Արևի հետ քուն մանենք:

## ԶՈՐՐՈՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Լեռնային տեսարան. Գիշեր է:  
Անուշը նստած է վրանի մոտ: Խումբը յերգում է.  
Լուսնակն անուշ, հովն անուշ,  
Վայ լի, լի, լի, լի, վայ լու, լու, լու, լու:

Տիրում է խորը լուռություն: Մոսին զգուշությամբ,  
շուրջը սառեցելով, դուրս է դալիս վրանից: Անուշը  
թագնվում է: Պահապանը ձայն է տալիս:

Մոսին ձին նստած իջնում է դյուղը Սարոյի խո-  
տի դեղը այրելու համար: Զվարճախոս Ոհանը հետե-  
վում է նրան: Գեղը չհասած նա նկատում է հրդեհի  
լույսը: Անուշը թագնված՝ սարսափահար, չհասկա-  
նալով թե ուր է գնում իր յեղբայրը՝ նայում է նրա  
հետեվից:

Սարոյի և Անուշի ժամադրված բուպեն հասնում է:  
Ժայռերի միջից Սարոն յերևում է և Անուշին ձայն է  
տալիս: Նրանք միասին փախչում են:

Մոսին վերադառնալով, զգուշությամբ մտնում է  
վրան: Իսկույն նկատում է, վոր Անուշը չկա: Զար-  
թեցնում է մորը և միասին դուրս են թոչում: Ատրճա-  
նակի ձայնից և աղմուկից դյուղայինները հավաքվում  
են: Մի կողմից հրդեհը, իսկ մյուս կողմից Անուշը  
չկա: Այդ պահին Ոհանը դյուղից հասնում է և սառում:

Ինձ լսեցեք, պատմեմ յես ձեզ,  
Ինչ վոր տեսա ես գիշեր...



Կես գիշերին իգիթ Մոսին  
Գեղ եր գնում իր ձիով:

Մոսին բարկանում է նրա վրա և սպառնում:  
Հասկանալով բանի եյությունը՝ քրտիվան իսկույն  
դյուղ է ուղարկում իրեն հավատարիմ մեկին, վոր նո-  
րից այլի Սարոյի խոտերի մնացածը, այս մասին  
միտժամանակ տեղեկացնելով Մոսին:

Նորից հրդեհի լույսը: Մոսին յերգվում է դռնեք  
նամարդ Սարոյին, վորը փախցրել է Անուշին և սպա-  
նել նրան:

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

(Առաջին պատկեր)

Անուշի տուն վերադառնալուց հետո, Սարոն թա-  
փառում է սարերում ու յերգում:

Բարձր սարեր, ա՛յ սարեր,  
Ձեմ եմ տալիս, վա՛յ սարե՛ր,  
Դուք ել ինձ հետ ձեմ տըվեք,  
Իմ դարդերին, քայ սարե՛ր:

Մոսին վորոնում է իր դուշմանին և յերբ Սարո-  
յին տեսնում է, թիկունքից հրացանը կրակում և սպա-  
նում է նրան:

Յերկրորդ պատկեր

Սարոյի սպանությունից հետո, Անուշը խեղաւար  
թ Կառում է լեռներում ու յերգում:

Յե՛տ դառ, յե՛տ, իգի՛թ,  
Յետ դառ, անիրա՛վ  
Կարոտած յարիդ,  
Աչքը ջուր դառավ:

Վռչխարդ եմ սարով  
Շուռ տուր, տո՛ւն արի



Փախի՛ր գիշերով,  
Ու մթնով արի:

*Մի անցվոր գյուղացի. նկատելով նրան, հարց-  
նում է.*

Սիրուն աղջիկ, ի՞նչ ես լալիս,  
հղպես մեռակ ու մոլոր,  
ի՞նչ ես լալիս ու մահ գալիս  
ես ձորերում ամեն սր:

Անհի՛ն. — Շնորհակա՛լ եմ, անցվո՛ր ախպեր,  
Աստված պահի է՛մ յարիմ.  
Համբիդ վերջում կանգնած է դեռ  
Անուշ ծիծաղն աչերին:

Ուրախ սրտով դուք ձեր սերը  
վաշելեցե՛ք անթառամ,  
ի՛նձ արցունք է տվել տերը,  
Յես պիտի լավ, պիտի լամ...

*Գալիս են ընկերուհիները. վարսնելով Անուշին՝  
նրանք յերգում են.*

Ամալի տակից ջուր է գալի,  
Դուք է տալիս փրփորում,  
Են ո՞ւմ յարն է նրստած լալի,  
Հոնգուր-հոնգուր են սարում:

*Անուշը թագնվում է. ազա մոտենում է նրանց՝  
յերգելով.*

Ա՛խ, ինչպես հանկարծ աշխարհը փոխվեց,  
ինչպես դատարկվեց կյանքում ամեն բան.

Մարերը մնացին վոք ու անչորան,  
Ա՛խ, ինչպես հանկարծ նա գրկաց հեռու,  
Ել չի՛ դառնալու, ել չի՛ դառնալու:

*Հեռվից լսվում է Անուշի մոր ձայնը.*

Անու՛շ, տուր արի՛, ո՞ւր կորար, բալես...

*Անուշը ջրջջալով, թագնվում է ժայռերի տակ:  
Խումբը յերգում է.*

Անլըսելի վըշվշում է  
Պըզտոր ջուրը Գեբեդի:  
Նըրա ափին կանաչում է  
Մեռակ շիրիմն իգիթի:

*Յերկինքն սկսում է մթազենել. փոթորիկը մոտե-  
նում է. աղջիկները շտապում են դեպի տուն: Մկտում  
է անձրև. ամպի գուռց: Ազա յերկինքը պարզվում է  
և իրիկնային արևն ընկնում է կանաչ սարերի դուշին:  
Անուշը յերևում է ժայռերում և առաջ վազելով յեր-  
գում է.*

Տեսե՛ք, տեսե՛ք, դափ ու գունուով  
ի՞նչ հարսնիք է դուրս գալի,  
Մարդիկ ուրախ, բոն ու ձյունով,  
Ձի յեն խազում, չափ տալի...

Աղջի՛, աղջի՛, մըտիկ արե՛ք,  
ես ի՞նչ տեսիլք յես տեսա,  
Ո՞վ եր տեսել եսպես հարսնիք,  
Վուչ հարս ունի, վուչ փեսա...

Բերում են հըրեն,  
Ամա՞ն, մեր տան դեմ...



Վե՛ր դըրե՛ք, վըրե՛ն  
Մազերս քանդեմ...

Յես էլ եմ գալի՛ս,  
եդ ո՞ւր եք տանում...  
ինձ էլ քաղեցե՛ք  
Իր գերեզմանում...

Արի՛, ջա՛ն իգիթ,  
Արի՛ անիրա՛վ,  
Կարոտած յարիդ  
Աչքը ջուր դառավ:

Ել մի՛ ուշացնի,  
Յես շատ եմ կացել,  
Ել մի՛ լացացնի,  
Յես շատ եմ լացել...

Տե՛ս կը խրոսովե՛մ,  
Լաց կը լինեմ յես էլ,  
Չեմ խոսի քեզ հետ,  
Չեմ սիրի քեզ էլ:

Մթնում է: Լսվում է Դերբեդի գոտոցը:

Վըշվըշում է գետը—վո՛ւշ, վո՛ւշ,  
Ու հորձանք է տալիս հորդ,  
Ու կանչում է՝ «արի, Անուշ,  
Արի՛, տանեմ յարիդ մտտ...»

Տուն չե՛մ գա, նանի՛,  
Նանի, էլ չե՛մ գա,  
Սարոն է կանչում՝  
Գալիս եմ ահա:

Զրե՛րի միջով  
Դեբեդի գրկով  
Ծաղկունե՛մ հատով  
Սարո ջան, քեզ մտտ:

Յե՛վ խելագար Անու՛շն իրեն հանձնում է Դերբեդի  
Չրերին:

Սու՛մբը յերգում է՝

Վուշ-վո՛ւշ Անու՛շ, վուշ-վո՛ւշ, փուրիկ,  
վո՛ւշ, փու սերին, փու յարին,  
վուշ-վո՛ւշ, Սարո, վուշ-վո՛ւշ, իգիթ,  
վո՛ւշ փու սիրած սարերին...



Գլավիտ 608. պատվեր 202. արած 4000

Գեորգյանի ուղարկած—Յերևան, 1 Գնունի 1.



ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

գրք

1-48



« Ազգային գրադարան



NL0302588



